ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

---

թիվ 03- 69

«06» ապրիլի 2011թ

Լոռու մարզպետ

պարոն Ա. Քոչարյանին

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 7-Ա-10 որոշումները և թիվ 9-12 կարգադրությունները:

Թումանյանի քաղաքապետ / Լ. Զավարյան /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

«01» մարտի 2011թ. Ո Ր Ո Շ Ու Մ թիվ 7-Ա

# ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՇԵՆՔԵՐԻ ԳԱԲԱՐԻՏԱՅԻՆ ՉԱՓԵՐՆ ԸՆԴԼԱՅՆՈՂ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ, ՇԵՆՔԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ , ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածների, «Թումանյանի քաղաքային համայնքի տարածքում 2011թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» Թումանյան համայնքի ավագանու 10.11.2010թ. թիվ 30-Ն որոշման, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հիմք ընդունելով Թումանյան քաղաքի բնակչուհի Հայկանուշ Աղամյանի դիմումը.

1.Թումանյան քաղաքի 1-ին թաղամասի 2-րդ փողոցի թիվ 4/2 բնակելի տան բնակչուհի Հայկանուշ Աղամյանին՝

1)Թույլատրել քանդել 1.4 քմ ներքին մակերեսով փչացած փայտե սանհանգույցը:

2)Թույլատրել քանդել փայտե միջնապատերը և 20.8 քմ ներքին մակերեսներով օժանդակ շինությունները դարձնել բնակելի:

3)Թույլատրել կառուցել 59.5 քմ մակերեսով օժանդակ շինություններ /խոհանոց, լոգարան, բաց պատշգամբ/:

4)Թույլատրել քանդել փայտե ցանկապատը և կառուցել այն քարից /d=0.3 մ/:

5)Թույլատրել սալիկապատել բնակելի տան ճակատային մասը:

6)Բնակելի տան վերակառուցման, վերափոխման սենքերի գործառնական նշանակության փոփոխության և շինարարության քանդման թույլտվության համար բյուջե մուծել համապատասխան դրույքաչափերով վճարներ:

2.Թումանյան քաղաքի բնակչուհի Հայկանուշ Աղամյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը տրամադրել 2-րդ փողոցի թիվ 4/2 փոստային հասցե:

Թումանյանի քաղաքապետ՝ /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

«21» մարտի 2011թ. Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 8

# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ Ք. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 14-րդ և 15-րդ կետերի, Լոռու մարզպետի 01.03.2011թ. թիվ 201/107.3.2/951-11 գր. և առաջնորդ-վելով «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ և ՀՀ կառավարության 26.12.2002թ. թիվ 54 արձանագրության 7-րդ կետով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2011թ. մարտի 18-ի թիվ 6 որոշումը.

1.Ս/ թ ապրիլի 1-ից վերակազմակերպել Թումանյանի քաղաքային համայնքի ենթակայության բյուջետային հիմնարկի թիվ 2 մանկապարտեզը «ՀՀ Լոռու մարզի ք. Թումանյանի նախադպրոցական ուսումնական հաստատության»՝համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

2.Համայնքային ծառայության առաջատար մասնագետ- հաշվապահ Անուշ Ամիրջանյանին՝ համայնքի բյուջեում կատարել համապատասխան փոփոխություններ՝ ՀՀ Լոռու մարզի ք. Թումանյանի նախադպրոցական ուսումնական հաստատության՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպության անցնելու կապակցությամբ:

Թումանյանի քաղաքապետ՝ /Լ. Զավարյան/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

«22» մարտի 2011թ. Ո Ր Ո Շ Ու Մ թիվ 9

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ Ք. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ կետի.

Հաստատել «ՀՀ Լոռու մարզի ք. Թումանյանի նախադպրոցական ուսումնական հաստատության» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը /հավելված 1/:

Թումանյանի քաղաքապետ /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

«28» մարտի 2011թ. Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 10

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու «Թումանյանի քաղաքային համայնքի տարածքում 2011թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» 2010թ. նոյեմբերի 10-ի թիվ 30-Ն որոշումը և Թումանյան համայնքի բնակիչ Վարդան Յովակիմի Հախվերդյանի դիմումը.

Թույլատրել Թումանյան քաղաքի բնակիչ Վարդան Յովակիմի Հախվերդյանին՝ 2011թ. ընթացքում իրականացնելու ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:

Թումանյանի քաղաքապետ՝ /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

«01»մարտի 2011թ. Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 9

ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը դադարեցրել է ՀՀ գյուղնախարարության, Թումանյանի քաղաքապետարանի և անասնաբույժի եռակողմ պայմանագիրը՝ ս/թ մարտի 1-ից լուծել Թումանյան համայնքի անասնաբույժ Արա Վիրաբյանի պայմանագիրը:

Թումանյանի քաղաքապետ՝ /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

«31»մարտի 2011թ. ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ թիվ 10

## «ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԾՐԱԳՐԻ» ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. մարտի 17-ի թիվ 59-Ա որոշմամբ հաստատված «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» կարգով մի շարք համայնքներում իրականացվելիք ծրագրերը հաստատելու մասին հավելվածի.

1.«Վարձատրվող հասարակական աշխատանքներ» կարգով Թումանյանի քաղաքապետարանի կողմից իրականացվող «Քաղաքի հրապարակի և փողոցների բարեկարգում, սելավատարների մաքրման օժանդակ աշխատանքներ» ծրագրի նախապատրաստման և իրականացման պատասխանատու նշանակել քաղաքապետի տեղակալ Ե. Շաքարյանին, իսկ տեխնիկական հսկողությունը դնել քաղաքապետարանի 1-ին կարգի մասնագետ Է. Հախվերդյանի վրա:

2.Աշխատանքներն սկսել ապրիլի 1-ից:

Թումանյանի քաղաքապետ՝ /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

«31»մարտի 2011թ. Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 11

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետի.

Թումանյանի քաղաքապետ Լևոն Զավարյանին ս/թ մարտի 31-ին մեկ օրով գործուղել ք. Երևան՝ Հայաստանի համայնքների միության խորհրդի նիստին մասնակցելու:

Թումանյանի քաղաքապետ /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

«31»մարտի 2011թ. Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 12

«ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԿԱՐԳՈՎ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՔԱՂԱՔԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԵՎ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ, ՍԵԼԱՎԱՏԱՐՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ՕԺԱՆԴԱԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. մարտի 17-ի թիվ 59-Ա որոշմամբ հաստատված «վարձատրվող հասարակական աշխատանքներ» կարգով մի շարք համայնքներում իրականացվելիք ծրագրերը հաստատելու մասին հավելվածի և «Զբաղվածության պետական ծառայության» գործակալության Ալավերդու տարածքային մարմնի կողմից 25.03.2011թ. ելք 78 ցուցակի.

«Վարձատրվող հասարակական աշխատանքներ» կարգով Թումանյանի քաղաքապետարանի կողմից իրականացվող «Քաղաքի հրապարակի և փողոցների բարեկարգում, սելավատարների մաքրման օժանդակ աշխատանքներ» ծրագրի իրականացման համար, համաձայն 140-149 պայմանագրերի, ներքոհիշյալ քաղաքացիներին ընդունել աշխատանքի՝ երկու ամիս ժամանակով՝ ս/թ ապրիլի 1-ից մինչև մայիսի 31-ը.

1.Ազատյան Արտաշես Նուբարի
2.Մելիքյան Արարատ Հովհաննեսի
3.Պարանյան Ռաֆայել Գառնիկի
4.Շաքարյան Հովիկ Սուրենի
5.Խարազյան Սարիբեկ Հովսեփի
6.Շահվերդյան Մհեր Ավետիքի
7.Դուռնոյան Պետրոս Հայկազի
8.Զաքարյան Հայկազ Արմենակի
9.Յախվերդյան Հովակիմ Հրայրի
10.Մելքոնյան Գառնիկ Հրաչիկի

Թումանյանի քաղաքապետ՝ /Լ. Զավարյան/